



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 22 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2014

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորիւ եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս յիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 5

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՂԹՔ

Ո՛վ Տէր, լսէ՛ ինչ որ կ'ըսեմ,
նկատի առ հեծեծանքներս:
Մտիկ ըրէ աղօթքս, ո՛վ իմ Թագաւորս եւ Աստուածս, կ'աղաչեմ քեզի:
Ո՛վ Տէր, առտու կանուխէն լսէ՛ կանչս,
առտու կանուխէն քեզի՝ կը բարձրացնեմ աղօթքս
եւ կը սպասեմ պատասխանիդ:
Դուն անօրէնութիւն չես սիրեր, ով Աստուած,
դուն չես կրնար չարիքին հետ հաշտուիլ.
հպարտները չես հանդուրժեր,
եւ կ'ատես անօրէնութիւն գործողները.
սուտ խօսողները կորուստի կը մատնես,
արիւնահեղ ու նենգաւոր մարդէն կը զգուիս, ո՛վ Տէր:
Բայց ես քու անչափ սիրոյդ ապաւինած՝
քու Տունդ պիտի մտնեմ,
երկիւղածութեամբ դէպի սուրբ տաճարդ պիտի դառնամ ու երկրպագեմ:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՐԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխահիս խաղաղութիւն:
Եւ Հիանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւնես ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՐԹՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*



ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ



ԵԼԻՑ Բ. ԳԼՈՒԽՍ



ՄՈՎՍԷՍԻ ԾՆՈՒՆԴԸ (2:1-10)

Ընդհանուր պատկերը ներկայացնելը յետոյ, այս գլուխը կը պատմէ Մովսէսի ծնունդը, ու անոր փրկութիւնը, թէ ինչպէս Աստուծոյ նախախնամութեամբ կ'ազարի Փարաօնին մահուան հրահանգէն: Հերարքրքրական է, սակայն, այն արքայապարտիւնը, որ մենք կը կարդանք այս գլխուն, ինչպէս նաեւ Գործք Առաքելոց գիրքին (7:20) եւ Եբրայեցոց նամակին մէջ (11:23), թէ «Մովսէս գեղեցիկ էր», Գործք Առաքելոց գիրքը պիտի աւելցնէ «Աստուծոյ առջեւ»: Սա կը նշանակէ, Աստուած ծրագիր մը ունի, որ այս անձի ճամբով պիտի իրականացնէ: Այնպէս ինչպէս, Պօղոս Առաքելի պարագային, երբ Աստուած զինք կը նկատէ որպէս «ընտրուած անօթ»: Ինչպէս կարելի է որ հալածող մը նկատուի Աստուծոյ աչքին որպէս ընտրուած անօթ: Սա կը նշանակէ, որ Աստուած անոր մէջ կը տեսնէ իր ծրագրին իրականացումը: Միւս կողմէ, Մովսէսի ծնողներուն հաւաքքը, որ ինչ որ ըրին հաւաքքով ըրին, թէւ չէին գիտեր թէ ինչ կրնայ պարտաւիճակ, բայց Աստուծոյ վրայ վստահելով ըրին, եւ այդ վստահութեամբ նաեւ շինեցին կուպրով փապանակը եւ ջուրը դրին:

Աստուծոյ նախախնամութիւնը կը շարունակուի: «Երթամ ու քեզի եբրայեցիներէն ծիծ փուռը կին մը կանչե՛մ, որ փղան սնուցանէ քեզի համար»: Ահաւասիկ Մովսէս կրկին անգամ իր մայրը պիտի ունենար որպէս դայակ կամ կաթնորոն կին, որ այս անգամ ոչ միայն պարգապէս կաթով պիտի սնուցանէր, այլ այն դաստիարակութեամբ, որով այդ ազգը ամբողջ կը դաստիարակուէր:

Ահա այս դաստիարակութիւնն էր, որ Մովսէսը մղեց, որ չափահաս ըլլալէ յետոյ երթայ եւ իր ժողովուրդը ճանչնայ, իր ժողովուրդին մաս կազմէ, մէկդի ձգելով բոլոր տեսակի պալապական փառք, պարի ու հարստութիւն: Միւս կողմէ, անարարքեր չէ իր ժողովուրդի կրած փառապանքին, որով տեսնելով անոնց գրկանքը, Եգիպտացի մը կը սպաննէ: Ասով կ'արժէք ցոյց տալու, թէ ինք իր անձնական ճիգերով կ'ուզէ ազատել իր ժողովուրդը, բայց արդէն լուրը կը փարածուի, ընդհակառակը, իր ազգակիցները նաեւ չեն հասկնար եւ չեն կրնար ըմբռնել զինքը, միւս կողմէ Աստուծոյ միջամտութիւնը, որ առանց Աստուծոյ կարելի չէ այդ փրկութիւնը ձեռք ձգել: Ահա կը փախցի դէպի Մադիամ:

Հերարքրքրականօրէն, Մովսէսի կեանքը կը բաժնուի 3 40-ներու, եւ ան կը մահանայ 120 փարեկանին:

1. Ծնունդէն մինչեւ իր ժողովուրդին ճանչնալը (Պալապական կեանք)
2. Անապարտին մէջ ոչխարներու հովուութեան փարիները
3. Ելք եւ անապարտային թափառումներ եւ մինչեւ խոստացեալ երկրի սահմանները հասնիլը

ՄՈՎՍԷՍ ՄԱՂԻԱՍ ԿԸ ՓԱԽՉԻ (2:11-25)

Մովսէս փախցելով Փարաօնէն կը հասնի Մադիամ, եւ հոն հովիւ աղջիկներու հօր կողմէ կը հրաւիրուի փուն եւ հոն կը մնայ ամուսնանալով անոր աղջիկներէն Սեպփօրայի հետ, որմէ կ'ունենայ զաւակ Գերսամ անունով, որ կը նշանակէ պանդխտացայ: Այս անունը կը յիշեցնէ թէ՛ Մովսէսի պանդուխտ վիճակը եւ թէ՛ իր նպատակը, ըսելու համար որ ինք հոն պանդուխտ էր, հետեւաբար ունէր հայրենիք, որուն պիտի վերադառնար: Մովսէսի երկար արեւն հոն մնալը, 40 փարիներ, նպատակ ունէր թէ՛ դաստիարակչական եւ թէ՛ զինք փնտրողները մեռած ըլլային (4:19): Իսկ Աստուած իր փուած ուխտը Աբրահամին յիշեց եւ լսեց իր ժողովուրդին աղաղակը, որ կը նշանակէ ժամանակը հարմար նկատեց: Այնպէս ինչպէս պիտի ըսէ ժողովուրդի գիրքը, «ամէն բանի արեւը կայ» (3:1):

Մովսէս ամուսնացաւ հեթանոս կնոջ մը հետ, ինչ որ յետագային խնդրայարոյց պիտի ըլլար այս պարագան: Միւս կողմէ, սակայն, կայ խորհրդանշական իմաստ մը: Մովսէս օտար հօրի, ոչխարներուն ջուր խմցուց, այնպէս՝ ինչպէս Քրիստոս հեթանոսներուն ալ Փրկիչը եղաւ եւ կենաց ջուրը փուաւ: Մովսէս հեթանոս կնոջ հետ ամուսնացաւ, իսկ Քրիստոս՝ հեթանոս եկեղեցոյ հետ: Ահաւասիկ նախապարտապարտութիւնը գալիք ճշմարիտ Մեսիային, որուն կ'ակնարկէ Մովսէս ըսելով. «Աստուած ինձի պէս մարդ մը պիտի փայ ձեզի» (Բ Օր 18:15):